ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. մայիսի 14-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Դոցենտի գիտական կոչում հայցելու երաշխավորման մասին
2. Կրթական ծրագրերի ղեկավարների ընտրություն և հաստատում
3. ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին հայտերի երաշխավորման մասին
4. Ընթացիկ հարցեր

1. **ԼՍԵՑԻՆ.** Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Անի Նորիկի Գալստյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Ա.Ն. Գալստյանը դիմել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովի 25.04.24թ. թիվ 6 նիստում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար: Նշեց նաև, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ևս 21.03.24թ. թիվ 8 նիստում միաձայն որոշել է միջնորդել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդին քննարկելու տնտեսագիտության թեկնածու Ա.Ն. Գալստյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, «Ֆինանսներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վ.Դանիելյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Ա.Ն. Գալստյանը արգասաբեր գործունեություն է ծավալել, բարեխիղճ աշխատող է, վայելում է կոլեկտիվի և ուսանողների սերն ու հարգանքը: Մատնանշելով Ա.Ն. Գալստյանի գիտական և մանկավարժական գործունեությունը՝ ելույթ ունեցողները առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում և կոչ արեցին կողմ քվեարկել:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ըստ կարգի ֆակուլտետի գիտխորհուրդը քվեարկությամբ երաշխավորում է գիտական կոչում հայցելու համար, իսկ ԵՊՀ գիտխորհուրդը փակ քվեարկությամբ հաստատում է այն: Հավելեց նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ անձը պետք է մեկ անգամ փակ քվեարկվի, առաջարկ կա՝ ֆակուլտետի գիտխորհրդում գիտական կոչում հայցելու վերաբերյալ քվեարկությունները կազմակերպել բաց: Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ Ա.Ն. Գալստյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ, դնել բաց քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Անի Նորիկի Գալստյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ, դնել բաց քվեարկության:

ԼՍԵՑԻՆ.

Խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփեց քվեարկության արդյունքները: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., ասիստենտ Ա.Ն. Գալստյանի օգտին՝ կողմ է քվեարկել գիտխորհրդի 26 անդամ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի բաց քվեարկության արդյունքները:

2. Քվեարկության արդյունքներով Անի Նորիկի Գալստյանը երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում հայցելու համար:

2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ ՏԿՖ բակալավրի կրթական ծրագրերի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների ընտրության և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ըստ կանոնակարգի բոլոր կրթական ծրագրերի ղեկավարները պետք է հաստատվեն ֆակուլտետի գիտխորհրդում և հաշվետվությամբ հանդես գան ուսումնական տարվա ավարտին: Հավելեց, որ ավանդաբար այս հարցը չի քննարկվել, ուստի օրակարգի այս հարցով կհաստատվեն ֆակուլտետում գործող և 2024-25 ուստարվա համար հայտագրված կրթական ծրագրերի ղեկավարները: Նախ ներկայացրեց բակալավրի կրթական ծրագրերի, հետո՝ մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարներին.

Բակալավրի կրթական ծրագրեր

«Տնտեսագիտություն» - տ.գ.թ., դոցենտ Հայրապետյան Գրիգոր
«Կառավարում» - տ.գ.թ., դոցենտ Միրզոյան Նարինե
«Ֆինանսներ» - տ.գ.թ., ասիստենտ Սահակյան Գնել

Մագիստրատուրայի կրթական ծրագրեր

«Գործարար վարչարարություն (կառավարում)» - տեխ.գ.թ., դոցենտ Զաքոյան Հարություն
«Շուկայագիտություն (մարքեթինգ)» - տ.գ.թ., դոցենտ Հակոբջանյան Աննա
«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» - տ.գ.թ., ասիստենտ Սահակյան Կարեն
«Ֆինանսներ» - տ.գ.թ., ասիստենտ Սահակյան Կարեն
«Տվյալների գիտությունը բիզնեսում» - տ.գ.դ., պրոֆեսոր Գևորգյան Ռուբեն
«Միջազգային տնտեսական հարաբերություններ» - տ.գ.դ., պրոֆեսոր Թորոսյան Թորոս

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ վերջին մեկ տարվա ընթացքում կրթական ծրագրերի բոլոր ղեկավարները աշխատել են ծանրաբեռնված՝ բոլոր ծրագրերը վերանայվել են թեմատիկ առումով, որոշ մագիստրոսական ծրագրերում փոփոխվել է նաև տևողությունը: Ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ բակալավրի կրթական ծրագրերի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ ՏԿՖ բակալավրի կրթական ծրագրերի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների ընտրությունը՝ քվեարկության 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

3. ԼՍԵՑԻՆ. ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին հայտերի երաշխավորման մասին հարցը:

3.1 «Հասարակական-տնտեսական զարգացման հենքային գործոնները և տրանսֆորմացիոն խնդիրները» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ամալյա Սարիբեկյան, օտարերկրյա գործընկեր՝ տնտ. և տեխ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շինկեվիչ Ալեքսեյ (Ռուսաստանի Դաշնություն)):

3.2 «Հայաստանի Հանրապետության միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման խնդիրները» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի ղեկավար՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարություն Զաքոյան, օտարերկրյա գործընկեր՝ տ.գ.դ., պրոֆեսոր Սոզինովա Անաստասիա (Ռուսաստանի Դաշնություն)):

3.3 «ՀՀ տնտեսական ռիսկերի կառավարման կառուցակարգի կատարելագործումը տարածաշրջանային զարգացումների համատեքստում» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նոննա Խաչատրյան, օտարերկրյա գործընկեր՝ պրոֆեսոր Թոմաս Դենտինո (Պորտուգալիա)):

3.4 «Հայաստանի Հանրապետությունում ջրային կուլտուրաների արտադրության արդյունավետ զարգացման մոդելավորման նորարարական տեխնոլոգիայի մշակում» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նաիրուհի Զրբաշյան, օտարերկրյա գործընկեր՝ դոկտոր Իոաննիս Լիակոս (Հունաստան)):

3.5 «ՀՀ կայուն զարգացումը աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում» գիտական թեմայով հայտի երաշխավորում (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոնա Սարգսյան, օտարերկրյա գործընկեր՝ ակադեմիկոս Ավթանդիլ Սիլագաձե (Վրաստան)):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ պարբերաբար Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն տարբեր դրամաշնորհներ է հայտարարում, դրա համար պետք է համապատասխան ստորաբաժանման գիտխորհրդի երաշխավորությունը: Հավելեց, որ վերջին շրջանում ֆակուլտետը բավականին ակտիվ է, քանի որ աշխատակիցները հետևում են հորդորներին և, որ այս կուրսը հետամուտ կերպով առաջ է տարվելու, քանի որ ֆակուլտետը պետք է ուժեղ գիտահետազոտական հենք ունենա: Նշեց նաև, որ բազային

ֆինանսավորման ուղղությամբ գործուն քայլեր են ձեռնարկվում և լիահույս ենք, որ առաջիկայում հարցը դրական հանգուցալուծում կունենա:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ՀՀ ԲԿԳԿ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «Կառավարման և գործարարության» ամբիոնի դասախոսներ՝ տ.գ.թ., պրոֆեսոր Ամալյա Սարիբեկյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Նոնա Խաչատրյանը և «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի դասախոսներ՝ տ.գ.թ., դոցենտ Նաիրուհի Ջրբաշյանը, տ.գ.թ., դոցենտ Սոնա Սարգսյանը: Ամփոփ ներկայացրեց դրամաշնորհային մրցույթին ներկայացված ծրագրերը՝ գիտական թեմայի անվանումը, ներգրավված օտարերկրյա գործընկերների տվյալները, հետազոտական նախագծերի հակիրճ նկարագրությունը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը:

Հարցադրումներն առնչվում էին դրամաշնորհային ծրագրի անվանմանը և հայտի ընդունման գործում ֆակուլտետի գիտխորհրդի երաշխավորության կարևորությանը:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հարցադրումներին հակիրճ պատասխանելով ընդգծեց, որ այս մրցույթի նպատակը նաև գիտական հոդվածների տպագրումը խրախուսելն է Scopus (Q1, Q2, Q3, Q4) ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականներում: Նշեց, որ այս մրցույթը թերևս վերջինն է, որ հայտ ներկայացնելիս տպագրություններ չի պահանջում Scopus-ում, միակ պայմանը՝ օտարերկրյա գործընկերը պետք է ունենա h-index in Scopus – 10: Ամենայն հավանականությամբ հետագայում մասնակցությունը պահանջելու է Scopus (Q1, Q2, Q3, Q4) ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականներում 2-ից 3 տպագրություն: Հավելեց նաև, որ երաշխավորված հայտերը գնահատվում են փորձագիտական խմբի կողմից, ինչի արդյունքում կա՛մ հաղթում են, կա՛մ չեն հաղթում:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին ներկայացված հայտերի երաշխավորման հարցը դնել փաթեթային քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ.

3.1 «Հասարակական-տնտեսական զարգացման հենքային գործոնները և տրանսֆորմացիոն խնդիրները» (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ամալյա Սարիբեկյան, օտարերկրյա գործընկեր՝ տնտ. և տեխ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շինկեվիչ Ալեքսեյ (Ռուսաստանի Դաշնություն)) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.2 «Հայաստանի Հանրապետության միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման խնդիրները» (թեմայի ղեկավար՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարություն Զաքոյան, օտարերկրյա գործընկեր՝ տ.գ.դ., պրոֆեսոր Սոզինովա Անաստասիա (Ռուսաստանի Դաշնություն)) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.3 «ՀՀ տնտեսական ռիսկերի կառավարման կառուցակարգի կատարելագործումը տարածաշրջանային զարգացումների համատեքստում» (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նոննա Խաչատրյան, օտարերկրյա գործընկեր՝ պրոֆեսոր Թոմաս Դենտինո (Պորտուգալիա)) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.4 «Հայաստանի Հանրապետությունում ջրային կուլտուրաների արտադրության արդյունավետ զարգացման մոդելավորման նորարարական տեխնոլոգիայի մշակում» (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Նաիրուհի Ջրբաշյան, օտարերկրյա գործընկեր՝ դոկտոր Իոաննիս Լիակոս (Հունաստան)) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.5 «ՀՀ կայուն զարգացումը աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում» (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոնա Սարգսյան, օտարերկրյա գործընկեր՝ ակադեմիկոս Ավթանդիլ Սիլազաձե (Վրաստան)) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Արման Մաքսիմի Մուրադյանի և «Ամերիաբանկ» ՓԲԸ Ինովացիաների և թվայնացման դեպարտամենտի բիզնես վերլուծաբանների թիմի ղեկավար Նարեկ Մաքսիմի Մուրադյանի համահեղինակած՝ «Բանկային մրցակցությունը և նրա գնահատման մեթոդները»

վերնագրով ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գ.Սահակյանը նշեց, որ սույն ձեռնարկի ստեղծման հիմքերը տաս տարվա վաղեմություն ունեն: Ամբիոնում ձեռնարկի քննարկման նպատակով երկու նիստ է տեղի ունեցել, առաջինը՝ նախորդ տարի, ձեռնարկը գրախոսել են ամբիոնի դոցենտներ՝ տ.գ.թ. Թ.Հովակիմյանը և տ.գ.թ. Բ.Ասատրյանը: Գրախոսների ընթացիկ դիտարկումները հիմք ընդունելով՝ վերջին մեկ տարում ձեռնարկն էապես բարելավվել է: Ուսումնական ձեռնարկի լրամշակված և փոփոխված տարբերակը քննարկվել է Ֆինանսահաշվային ամբիոնի 03.05.24թ. թիվ 8 նիստում և միաձայն երաշխավորվել է տպագրության: Տ.գ.թ. Գ.Սահակյանը մատնանշեց, որ ձեռնարկի համահեղինակները բանկային ոլորտի ներկայացիչներ են և մեծ փորձառություն ունեն, հավելեց նաև, որ ամբիոնի դասընթացների կազմակերպման համար միակ հայալեզու ձեռնարկը Բ.Ասատրյանի «Բանկային գործ» աշխատությունն է և առաջարկեց կողմ թվեարկել ձեռնարկի տպագրության երաշխավորմանը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը:

Հարցադրումներն առնչվում էին կոնկրետ դասընթացների շրջանակում ձեռնարկի կիրառելիությանը, որպես մեխանիզմ մրցակցության առանձնահատկություններին՝ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների համատեքստում:

3. Ձեռնարկի համահեղինակ տ.գ.թ., ասիստենտ Ա.Մուրադյանը, հարցադրումներին սպառիչ պատասխանելով, ընդգծեց, որ ՀՀ-ում բանկային մրցակցությանը առնչվող ուսումնասիրությունները քիչ են, ԿԲ-ում այս խնդրով զբաղվող բաժինը ստեղծվել է 3-4 տարի առաջ: Հավելեց, որ ձեռնարկը նախատեսված է նաև բանկային ոլորտի կարգավորման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմինների և ստորաբաժանումների ղեկավարների համար:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը՝ քննարկման արդյունքները ամփոփելով, նշեց, որ ձեռնարկի տպագրությունը ողջունելի է, քանի որ տեսական դրույթներից զատ պարունակում է մեթոդական մաս և կարող է օգտագործվել ուսումնական գործընթացում՝ նպաստելով Ֆինանսահաշվային ամբիոնի կողմից դասավանդվող որոշ դասընթացների պատշաճ դասավանդմանը: Մատնանշեց, որ երկու գրախոսների դրական կարծիքները և ամբիոնի որոշումը բավարար են ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 03.05.24թ. թիվ 8 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված

կարծիքները՝ ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Արման Մաքսիմի Մուրադյանի և «Ամերիաբանկ» ՓԲԸ Ինովացիաների և թվայնացման դեպարտամենտի բիզնես վերլուծաբանների թիմի ղեկավար Նարեկ Մաքսիմի Մուրադյանի համահեղինակած՝ «Բանկային մրցակցությունը և նրա գնահատման մեթոդները» վերնագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ուսումնական ձեռնարկը երաշխավորվեց տպագրության՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*